ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան	19.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/189

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
Մասնակից՝ «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ և «Օվացիա» ՍՊԸ (համատեղ գործունեության պայմանագիր)

Մասնակցությամբ՝
«Կարեն Դեմիճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ղազարյանի,
«ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի և «Օվացիա» ՍՊԸ-ի ներկայացուցիներ՝ Ե. Պետրոսյանի, Ս. Դովլաթյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնանշման հարցում, լուսային սարքերի և էլեկտրական լամպերի ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17830-2019 գրությամբ «ԱԷՍ

Սիսթեմս» ՍՊԸ-ին և «Օվացիա» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) (այսուհետ նաև՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի 28.10.2019թ.-ի թիվ 339 գրության հիման վրա, 30.10.2019թ.-ին «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ին և «Օվացիա» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 30.10.2019թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 24.10.2019թ.-ի թիվ 580-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 01.11.2019թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

04.11.2019թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2019/190 համարի ծածկագիրը և 07.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 07.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.11.2019թ.-ին:

2. <u>«Կարեն Դեմիճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ ն 09.10.2019թ.-ի թիվ 316 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՍԱԿ-ի կողմից 16.08.2019 թվականին կազմակերպված ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ էր ներկայացրել «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ն և «Օվացիա պրոդյուսերական կենտրոն» ՍՊԸ-ն կոնսորցիում: ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2019 թվականի նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել N 15 չափաբաժնի մասով մերժել «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ին ն «Օվացիա» պրոդյուսերական կենտրոնին (կոնսորցիում), հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացնելու պատճառով: Հրավերով սահմանված պայմաններից մեկն այն է, որ մասնակիցը N 15 չափաբաժնի մասով լինի իր կողմից ներկայացված ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում և փաստաթղթերի հետ միասին ներկայացնի պաշտոնական ներկայացուցչի սերտիֆիկատը: Ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի փաթեթում բացակայում է ապրանքն արտադրողի կողմից համապատասխան պաշտոնական սերտիֆիկատը, որը ըստ մասնակցից ստացած պարզաբանման առաջացել է ապրանքն արտադրող ընկերության Բուլղարիայի պաշտոնական ներկայացուցչի կողմից վերջինիս հետ նախապես ձեռքբերված գրավոր պայմանավորվածությունների խախտման պատճառով, ինչը մասնակցի կողմից նախապես չէր կարող կանխատեսվել և ինչի հետևանքով էլ մասնակիցը չի կարող ՀՀ-ում մատակարարել գնման առարկան:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, Պատվիրատուն 28.10.2019թ.-ի թիվ 339 գրությամբ ներկայացրել է թիվ «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի և «Օվացիա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի և «Օվացիա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.11.2019թ.-ին գրությամբ դիմել է «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ին և «Օվացիա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17830-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Կոնսորցիումի գրավոր կարծիքը:

Կոնսորցիումը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Լուսային սարքավորումների ձեռքբերման նպատակով «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է ԴԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21 ծածկագրով գնման ընթացակարգ, որին համատեղ գործունեության պայմանագրի շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի և «Օվացիա» պրոդյուսերական կենտրոն ՍՊԸ-ի կողմից:

Գնահատող հանձնաժողովի 06.09.2019թ կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն Ընթացակարգի 1, 2, 9, 11-15 չափաբաժինների մասով Մասնակիցը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող:

Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը Մասնակցի կողմից ներկայացվել են հրավերով սահմանված ժամկետներում:

Գնահատող հանձնաժողովի 30.09.2019թ կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն Մասնակիցը Ընթացակարգի 1,2,9,11-14 չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 15-րդ չափաբաժնի մասով հայտը մերժվել է հետևյալ հիմնավորմամբ՝ մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի փաթեթում բացակայում է ապրանքն արտադրողի կողմից համապատասխան պաշտոնական սերտիֆիկատը, որը ըստ մասնակցից ստացած պարզաբանման առաջացել է ապրանքն արտադրող ընկերության կողմից վերջինիս հետ նախապես ձեռքբերված գրավոր պայմանավորվածությունների խախտման պատճառով, ինչը մասնակցի կողմից նախապես չէր կարող կանխատեսվել և ինչի հետևանքով էլ Մասնակիցը զրկվել է ՀՀ-ում (Ընթացակարգի շրջանակներում) գնման առարկայի մատակարարման իրավունքից:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով Մասնակցի տվյալները ներկայացվել է ՀՀ ՖՆ:

Մասնակիցը հայտնում և հավաստում է, որ նման իրավիճակում հայտնվելու պատճառ է հանդիսացել ապրանքն արտադրող կազմակերպության պաշտոնական ներկայացուցչի հետ նախապես ձեռքբերված պայմանավորվածությունը, համաձայն որի 18.07.2019թ ստացած պաշտոնական գրությամբ DYNACORD Pro Audio & Lighting Company ընկերությունը, որպես պաշտոնական ներկայացուցիչ համաձայնվել էր Մասնակցին

տրամադրել Ընթացակարգի 15-րդ չափաբաժնի համար Մասնակցի կողմից առաջարկված ապրանքները, սակայն այն խախտվել է DYNACORD Pro Audio & Lighting Company ընկերության կողմից, 26.09.2019թ մեկ այլ գրությամբ Մասնակցին տեղեկացնելով, որ չի կարող մատակարարել տվյալ ապրանքները, քանի որ ապրանքն արտադրող ընկերությունը Ընթացակարգի շրջանակներում «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ին մատակարարվելիք ապրանքների մասով արդեն իսկ ունի նախապես ձեռքբերված պայմանավորվածություններ հայկական մեկ այլ կազմակերպության հետ, որը նույնպես հանդիսանում է Ընթացակարգի մասնակից և դրանք արդեն վաղուց ամրագրված են տվյալ կազմակերպության համար:»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կոնսորցիումը Բողոքներ քննող անձին խնդրել է «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ին և «Օվացիա» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/189 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

16.08.2019թ.-ին «Կարեն Դեմիճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից լուսային սարքերի և էլեկտրական լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ն («Օվացիա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.09.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին, 2-րդ, 9-րդ և 11-15-րդ չափաբաժինների մասով «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ն («Օվացիա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 43-րդ կետը, որոշել է էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 30.09.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի («Օվացիա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր) կողմից ներկայացված հայտը թիվ 15-րդ չափաբաժեի մասով մերժվել է, քանի որ Կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի փաթեթում բացակայում է ապրանքն արտադրողի կողմից համապատասխան պաշտոնական սերտիֆիկատը, որը ըստ Կոնսորցիումից ստացած պարզաբանման առաջացել է ապրանքն արտադրող ընկերության կողմից վերջինիս հետ նախապես ձեռքբերված գրավոր պայմանավորվածությունների խախտման պատճառով, ինչը մասնակցի կողմից նախապես չէր կարող կանխատեսվել և ինչի հետևանքով Կոնսորցիումը զրկվել է ՀՀ-ում գնման առարկայի մատակարարման իրավունքից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը թիվ 15-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով հրավերի 7.12-ից 7.19-րդ կետերով սահմանված պայմանները:

«ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 15-րդ չափաբաժնի մասով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսվել է ղեկավարման վահանակ-(grandMA3 full-size կամ համարժեքը): Նաև նշվել է, որ անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը հանդիսանա իր կողմից ներկայացված ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում (փաստաթղթերի հետ միասին ներկայացնելով պաշտոնական ներկայացուցչի սերտիֆիկատը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17830-2019 գրությամբ «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ին («Օվացիա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման

առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (02.05.2019թ.-ի N 516-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ…:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը: Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվում և հաստատվում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը, իսկ ապրանքների գնման դեպքում պայմանագրի կատարման փուլում նշվում է համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված

դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը…:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

«ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Հրավերի.

- 7.12-րդ կետի 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝

սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

- 7.13-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը սույն հրավերի 1-ին մասի 7.12-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերը հիշյալ ենթակետով սահմանված ժամկետում ուղարկում է հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին…:
- 7.17-րդ կետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն հրավերի 1-ին մասի 7.13-րդ կետի 4-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից

ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխա-նությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Կարեն Դեմիճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից լուսային սարքերի և էլեկտրական լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ն («Օվացիա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր):

Հանձնաժողովի 06.09.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին, 2-րդ, 9-րդ և 11-15-րդ չափաբաժինների մասով «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ն («Օվացիա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, ինչով պայմանավորված որոշվել է էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի 30.09.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի («Օվացիա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր)

կողմից ներկայացված հայտը թիվ 15-րդ չափաբաժեի մասով մերժվել է, քանի որ Կոնսորցիումի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի փաթեթում բացակայում է ապրանքն արտադրողի կողմից համապատասխան պաշտոնական սերտիֆիկատը, որը ըստ Կոնսորցիումից ստացած պարզաբանման առաջացել է ապրանքն արտադրող ընկերության կողմից վերջինիս հետ նախապես ձեռքբերված գրավոր պայմանավորվածությունների խախտման պատճառով, ինչը մասնակցի կողմից նախապես չէր կարող կանխատեսվել և ինչի հետևանքով Կոնսորցիումը զրկվել է ՀՀ-ում գնման առարկայի մատակարարման իրավունքից:

«ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 15-րդ չափաբաժնի մասով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսվել է ղեկավարման վահանակ-(grandMA3 full-size կամ համարժեքը): Նաև նշվել է, որ անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցը հանդիսանա իր կողմից ներկայացված ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում (փաստաթղթերի հետ միասին ներկայացնել պաշտոնական ներկայացուցչի սերտիֆիկատը):

Այսպիսով, բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կոնսորցիումի հայտը մերժելու մասին Հանձնաժողովի կողմից 30.09.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումն ոչ իրավաչափ է, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, 47-րդ կետով և Հրավերի 7.17-րդ կետով սահմանված դրույթներին, քանի մինչև պայմանագրի կատարման փուլը Հանձնաժողովն իրավունք չուներ մասնակցից պահաջելու ներկայացնել առաջարկվող ապրանքի պաշտոնական ներկայացուցչի համապատասխանության սերտիֆիկատ, որպիսի նշված փաստաթղթի չներկայացման պատճառաբանությամբ մերժեր Կոնսորցիումի հայտը, ավելին՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով պետք է ծանուցեր առաջին տեղն զբաղեցրած՝ «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ին («Օվացիա» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագիր)՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի և «Օվացիա» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագիր) հայտը մերժելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումն ոչ իրավաչափ է, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված սկզբունքներից և պահանջներից:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կոնսորցիումի կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Կոնսորցիումին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.10.2019թ.-ի թիվ 26/26-1/17830-2019 գրությամբ «ԱԷՍ Սիսթեմս» ՍՊԸ-ին և «Օվացիա» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/189 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**